ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար բենզինի ձեռքբերման
նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/18» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«17» հուլիսի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/18» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (15.07.2024թ.)՝ ժամը 11:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 16.07.2024թ.՝ ժամը 11:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնման գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման գինը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	Բենզին, ռեգուլյար	14596400

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
ՖԼԵԾ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30
«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	ք. Երևան, Էրեբունի 12/4

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/18» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	
1	ՖԼԵԾ ՍՊԸ	12163666.67	20%	14596400	12163666.67	20%	14596400.00	
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	12297333.34	20%	14756800	12297333.34	20%	14756800.00	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 16.07.2024թ.՝ ժամը 11:30-ին և ՖԼԵԾ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մուտքագրման (լրացման) մասին.

ՖԼԵԾ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի (հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

ՖԼԵԾ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ) և գնահատվում է բավարար,
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի վերաբերյալ.

9.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- ՖԼԵԾ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

9.2. «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գինը գերազանցել է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գնման գինը, ուստի հիշյալ մասնակցի կողմից ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան